

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

1.1. Ազգային հաշիվներ, համախառն ներքին արդյունքի ցուցանիշ

1.1.1. Համախառն ներքին արդյունքի ցուցանիշ

2005թ. հունվար- հոկտեմբերի ՀՆԱ ցուցանիշ

Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) արտադրության ծավալն, ընթացիկ գներով, 2005թ. հունվար-հոկտեմբերին կազմել է 1701316.9 մլն.դրամ, իսկ իրական ծավալի ինդեքսը 2004թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ կազմել է 112.2%` 2004թ. հունվար- հոկտեմբերի 109.7 % համապատասխան ցուցանիշի դիմաց:

ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով 2005թ. հունվար- հոկտեմբերին կազմել է 528836 դրամ, կամ 1153.5 ԱՄՆ դոլար:

ՀՆԱ-ի արտադրությունը տնտեսության հիմնական բազային ճյուղերով

	(%)					
	Իրական ծավալի ինդեքսները նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ		ՀՆԱ-ի հավելաճին նպաստման չափը (տոկոսային կետով)		ՀՆԱ-ի կառուցվածքը	
	հունվար- հոկտեմբեր					
	2004	2005	2004	2005	2004	2005
Ընդամենը, բազային ճյուղեր այդ թվում`	109.7	113.3	7.1	9.8	73.9	74.9
արդյունաբերություն	101.7	105.9	0.4	1.2	20.5	20.3
գյուղատնտեսություն	113.8	110.4	2.9	2.4	23.3	19.7
շինարարություն	113.0	131.5	2.1	4.7	14.9	20.6
տրանսպորտ և կապ	117.2	112.0	0.9	0.6	5.5	5.1
առևտուր և հանրային սնունդ	108.8	109.0	0.8	0.9	9.7	9.2
Ընդամենը, այլ ճյուղեր	113.2	110.3	2.3	1.8	17.5	16.6
ՀՆԱ-ն հիմնական գներով	110.4	112.7	9.4	11.6	91.4	91.5
Ապրանքների (արտադրանքի) զուտ (հանած սուբսիդիաներ) հարկեր	103.0	106.8	0.3	0.6	8.6	8.5
ՀՆԱ-ն շուկայական գներով	109.7	112.2	9.7	12.2	100.0	100.0

Արտադրված ՀՆԱ-ի կառուցվածքը

	(%)	
	հունվար- հոկտեմբեր	
	2004	2005
Համախառն ներքին արդյունք	100	100
ապրանքներ	58.9	60.9
ծառայություններ	32.5	30.6
ապրանքների (արտադրանքի) զուտ (հանած սուբսիդիաներ) հարկեր	8.6	8.5